

# ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Նոյեմբերի 16-ը Հանդուրժողականության միջազգային օրն է:**

Հանդուրժողականության միջազգային օրն անհրաժեշտ է ի հաստատումն այն գաղափարի, որ բազմազանությունը՝ մարմնավորված մտքերում, հավատքներում և գործողություններում, արժեքավոր նվեր է, այլ ոչ սպառնալիք: Անհրաժեշտ է ձգտել հանդուրժողական համայնքների ստեղծմանը, որոնց կյանքում կարմատավորվի հիմնական իդեալը: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ձգտի աջակցել հանդուրժողականության, բազմակարծության, փոխադարձ հարգանքի և խաղաղ գոյակցության սկզբունքներին: Մենք միշտ պետք է պատրաստ լինենք վերացնել կարծրատիպերը և խեղաթյուրված պատկերացումներն ու հանդես գանք խտրականության զոհերի պաշտպանության օգտին:

